



Արեւմտեան Հայաստանը վաւերացուց Սեւրի Դաշնագիրը

Ներածութիւն:

«The Times» թերթի Փարիզի թղթակիցը 11 Օգոստոս 1920-ին գրեր է հետեւեալ յօդուածը.

«1920 թուականի Օգոստոսի 10-ին, 11 Դաշնակից Պետութիւնները ստորագրեցին Սեւրի Դաշնագիրը: [1]

Հայ-թիւրքական Դաշնագիրը վերջապէս ստորագրուեցաւ:

Արարողութիւնը տեղի ունեցաւ Սեւրի մէջ՝ կէսօրէն յետոյ, ժամը 16-ին:

Զգճումներէ ետք՝ որուն պատճառը կը հանդիսանար յոյն-իտալական բանակցութիւնները: Թիւրքական պատուիրակութիւնը ինչ որ այլ պատճառով ժխտեց ստորագրել Դաշնագիրը՝ դէմ չըլլալով Սերպիային, որ պէտք է յատուկ ստորագրութիւն ստանար Կոնստանդնուպոլսէն:

Սերպիան չստորագրեց, որովհետեւ չէր ուզեր պատրականութիւն վերցնել թիւրքական պարտքին համար, որու կազմակերպումը պէտք է տեղափոխուէր Սերպական Թագաւորութիւն, Խորուաթիա եւ Սլովենիա, որոնք միասնօրէն կ'առանձնանային հին թիւրքական տարածաշրջանէն:

Սակայն, այդ ժամանակաւրնթացքին ստորագրելու թոյլտուութիւն ձեռք բերած են Գեներալ Հադի Փաշան, Ռիզա Թաֆիկ Պէր եւ Ռաշիտ Պէր, ուստի արարողութիւնը տեղի ունեցած է քանի մը ժամ յետոյ: Թիւրքական պատուիրակութեան ստորագրութենէն ետք, Դաշնակից Պետութիւններու ներկայացուցիչները նոյնպէս ստորագրած են, Սեծ Բրիտանիան ներկայացուցած է Պարոն Ջորջ Գահամը:

Ստորագրութիւնները դրուած են երեք փաստաթուղթերու վրայ. առաջին՝ նոյն ինքն Դաշնագիրին վրայ, երկրորդ՝ յոյն-իտալական արձանագրութեան վրայ, եւ երրորդ՝ այն արձանագրութեան վրայ, որ կը վերաբերի Փոքր Ասիային: Ընթացակարգը նման էր ստորագրման ընթացակարգին, որն ընդունուէր էր նախորդ Դաշնագիրը ստորագրելու ժամանակ:

Թիրքական ներկայացուցիչները հազած էին բաճկոններ, բայց պահպանած էին Ֆեսը ամբողջ արարողութեան ընթացքին, ըստ իրենց ազգային աւանդոյթին:

Ստորագրող Պետութիւնները եղած են Թիրքիան, ինչպէս նաեւ Մեծ Բրիտանիան, Ֆրանսան, Իտալիան, Ճապոնիան, Հայաստանը, Բելճիքան, Յունաստանը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Չեխոսլովաքիան:

Սերպիան, եւ Հեճազը չեն ներկայացած:

Խաղաղութեան Պայմանագիրի վաւերացումը Հունգարիոյ հետ, եւ Դաշնագիրը, որ ստորագրուեր է Թիրքիոյ կողմէ, յետագային՝ Մեծ Բրիտանիոյ կողմէ կը հանդիսանայ սոյն պատերազմի աւարտը, որ սկսեր էր 1914 թուականին:

Խաղաղութիւնը՝ Գերմանիոյ հետ, ստորագրուեր է Վերսայլի մէջ, 1919 թուականի Յունիսի 28-ին, վաւերացուեր է Յունուարի 10-ին:

Խաղաղութիւնը՝ Պուլկարիոյ հետ, ստորագրուեր է Նոյիի մէջ, 1919 թուականի Նոյեմբերի 27-ին եւ վաւերացուեր է Օգոստոսի 9-ին:

Խաղաղութիւնը՝ Հունգարիոյ հետ, ստորագրուեր է Վերսայլի (Թրիանոն) մէջ 1919 թուականի Յունիսի 4-ին, բայց այն մինչեւ օրս չէ վաւերացուած:

Համայնքներու Պալատի հարցին ի պատասխան, Յունիսի 1-ին պարոն փաստաբան Պոնարը յայտարարեր է, որ համաձայն դադարեցման Օրէնքին (Սահմանման) անոնք չեն կրնար գերծուիլ, քանի դեռ ստորագրուած Պայմանագիրները Գերմանիոյ, Աւստրիոյ, Պուլկարիոյ, Հունգարիոյ եւ Թիրքիոյ հետ չեն ստացած անհրաժեշտ վաւերացումը:

1. The Times, August 11, 1920

* * *

Պաշտօնական հաղորդագրութիւն Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան՝ Սերի պայմանագիրը վաւերացնելուն մասին

Այս իսկ պատճառով, 2016 թուականի Մայիսի 9-ին, ներկայացուեցաւ օրինագիծ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահութեան, որ թոյլ կուտայ վաւերացնելու Սերի Խաղաղութեան Դաշնագիրը Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կողմէ:

Այս նախագիծը փոփոխուած է քանի մը անգամ, եւ անոր երրորդ տարբերակը, որ պէտք է ընդունուէր Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) անդամներուն եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի Իրաւաբանական Խորհուրդին կողմէ, արդէն աւարտուած է 2016 թուականի Յունիսի 24-ին, Երեւանի Ժամանակով 23:30-ին:

Օրէնքի Նախագիծը ներկայացուած եւ պաշտպանուած է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարար՝ պարոն Գառնիկ Սարգիսեանի կողմէ, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ՝ պարոն Տիգրան Փաշաբեգեանի համաձայնութեամբ, Կառավարութեան կողմէ, որ կը գտնուի Եւրոպայի սահմաններէն դուրս, եւ ընդունուած է միաձայն, մէկ ձայն դէմ, ինչը թոյլ կուտայ վաւերացնելու Սեւրի Խաղաղութեան Դաշնագիրը եւ լրացուցիչ Պայմանագիրերու Հաւելուածները, որոնք ստորագրուէր են 1920 թուականի Օգոստոսի 10-ին:

2016 թուականի Յունիսի 24-ը կը համարուի պատմական օր, այդ օրը Սեւրի Դաշնագիրը վաւերացուեցաւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէնակ Աբրահամեանի կողմէ:

Ընդունուած օրինագիծը բաղկացած է երկու յօդուածներէ:

Յօդուած ա. - Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան) Նախագահը լիազորուած է վաւերացնելու Խաղաղութեան պայմանագիրը, որն ստորագրուէր է Սեւրի մէջ՝ 1920 թ. 10 Օգոստոսին, ինչպէս նաեւ նոյն օրը ստորագրուած լրացուցիչ պայմանագիրերու Հաւելուածները, որոնք նշուած են ստորեւ:

- Պայմանագիրը Դաշնակից Տէրութիւններուն հետ, այն է, որ ընդունուին որոշումներ, որոնք անհրաժեշտ կը համարուին այդ Տէրութիւններուն կողմէ, որոնք կը պաշտպանեն տուեալ Պետութեան բնակիչներուն, որոնք պետական մաս չէին կազմած բնակչութեան մեծամասնութեան առումով, որոնք ունին՝ ռասայի, լեզուի կամ կրօնի տարբերութիւն:
- Լրացուցիչ արձանագրութիւն դիւանագիտական ծառայութիւններու համար, այն Պետութիւններու տարածքներուն վրայ, որոնք ստորագրած են Պայմանագիրը:
- Պայմանագիրի հիմնական Դաշնակից Տէրութիւններուն հետ սահմանել դրոյթներ, որոնք անհրաժեշտ կը համարուին այդ տէրութիւններու ազատութիւնն ապահովելու, տարանցման եւ արդարացի վերաբերմունք այլ ազգերու հետ առեւտուր կատարելու համար:

Յօդուած բ. - Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Հայաստան պետութիւն) Նախագահը լիազորուած է հետապնդելու ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնի Իրաւարար Վճռի Պաշտօնավարութեան հրամանի իրականացման գործընթացը, որն ստորագրուած է 1920 թուականի Նոյեմբերի 22-ին:

Այն նշուած կ'ըլլայ առանձնակի Միջազգային Համատեքստին մէջ, ինչը կը նշանակէ, թէ Սերի Դաշնագիրը վաւերացուեր է Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան կողմէ:

Նոյն օրը, վաւերացումէն քանի մը ժամ առաջ, հանրաքուէի միջոցով Մեծ Բրիտանիան դուրս եկաւ Եւրո-Միութենէն, 51,9 % ձայն կողմ քուէարկութեամբ:

Նոյն օրը Հռոմի Պապ Ֆրանցիսկոն այցելեց Երեւան, իր ելոյթին մէջ դատապարտեց ցեղասպանութիւնը, որ տեղի ունեցած է հայ ժողովուրդին դէմ:

Եւրո-Միութենէն Մեծ Բրիտանիայի դուրս գալը ճգնաժամային ցուցանիշ է, ինչը կապուած է Սուրիոյ պատերազմի, փախստականներու ճգնաժամի, Մերձաւոր Արեւելքի հետ, որ լեցուն է անտարբերութեամբ, այդ շարքին Արեւմտեան Հայաստանի նկատմամբ:

* * *

Սերի Դաշնագիրի 457-458 էջերը կը նշեն վաւերացնելու համար պայմանները, որոնք վերօրինակուեր է ստորեւ.

Սոյն Դաշնագիրը կազմուած է ֆրանսերէն, իտալերէն եւ անգլերէն, եւ ենթակայ է վաւերացման:

Տարակարծութիւններու պարագային, կը գերակայի ֆրանսերէն տարբերակը, բացառութեամբ 1-ին բաժինին (Ազգերու Լիգայի պակտի) եւ 12-րդ բաժինի (Աշխատանքի) վերաբերեալ, որտեղ ֆրանսերէն եւ անգլերէն տարբերակները կ'ունենան հաւասար արժէք:

Վաւերացման արարողութիւնը տեղի կ'ունենայ Փարիզի մէջ, հնարաւորին չափ կարճ ժամանակահատուածի մէջ:

Տէրութիւնները, այսինքն Կառավարութիւնը որու գրասենեակը կը գտնուի Եւրոպայէն դուրս, իրաւունք կ'ունենան Ֆրանսական Խորհրդարանին եւ Կառավարութեան տեղեակ պահել իրենց Փարիզի դիւանագիտական ներկայացուցիչի միջոցով, այն մասին, որ տրուեր է իրենց վաւերացումը, եւ անոնք պէտք է հնարաւորին չափ արագընթաց ժամանակին զայն փոխանցեն:

Վաւերացումներու առաջին արձանագրութիւնը կը կազմուի այն ժամանակ, երբ մէկ կողմէն՝ Թիւրքիան, միւս կողմէ՝ երեք գլխաւոր Դաշնակից Պետութիւնները կը ստորագրեն Դաշնագիրներու վաւերացումը:

Առաջին արձանագրութենէն ի վեր Դաշնագիրը ուժի մէջ կը մտնէ, Բարձր պայմանաւորուող կողմերու կողմէ, որոնք նոյնպէս այն կը վաւերացնեն:

Հաշուարկելու համար բոլոր ժամանակային սահմանափակումները, սուեալ Դաշնագիրի համար, այս օրը կը հանդիսանայ Դաշնագիրի ուժի մէջ մտնելու օր:

Բոլոր առումներով Դաշնագիրը ուժի մէջ կը մտնէ սկսած վաւերացման օրէն՝ իւրաքանչիւր Տէրութիւններու կողմէ:

Ֆրանսական Կառավարությունը բոլոր ստորագրած Տերություններուն կը փոխանցէ վաւերագիրերու արձանագրություններուն հաստատման պատճեն:

Ի վկայութիւն, վերանուանեալ լիազօր ներկայացուցիչները ստորագրեցին սոյն Դաշնագիրը (14 ստորագրեալ կողմեր)

* * *

Պատմական ակնարկ

- - Հայկական Պետութիւնը Արեւմտեան Հայաստանի տարածքին *դէ ֆակտո* ճանչցուեցաւ **Յունուարի 19, 1920 թ.** (Անկախութեան օրը) Գերագոյն Խորհուրդի Դաշնակից տերութիւններու կողմէ:
- - Հայկական Պետութիւնը Արեւմտեան Հայաստանի տարածքին ճանչցուեցաւ *դէ յուրէ, 1920 թ. Մայիսի 11-ի* Գերագոյն Խորհուրդի Դաշնակից տերութիւններու կողմէ:
- - Հայկական Պետութիւնը, գլխաւոր Դաշնակից Տերութիւնները, Դաշնակից Տերութիւնները եւ Թիւրքիան ստորագրեք են Սեւրի պայմանագիրը **1920 թուականի Օգոստոսի 10-ին**:
- - **1920 թ. Նոյեմբերի 22-ին**, Նախագահ Վուրդո Վիլսոնը ստորագրեց Իրաւարար Վճիռ, որով նշեց պետական սահմանը Հայաստանի եւ Թիւրքիոյ միջեւ:
- - **2004 թուականի Դեկտեմբերի 17-ին**, Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդը հռչակեց իր գոյութեան մասին Շուշիի մէջ:
- - **2007 թուականի Դեկտեմբերի 17-ին**, Արեւմտեան Հայաստանի Վեհաժողովի պատուիրակները ընդունեցին պաշտօնական Հռչակագիր Արեւմտեան Հայաստանի հայերու իրաւունքներուն մասին:
- - **2011 թուականի Փետրուարի 4-ին**, Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը ստեղծեց Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը:
- - **2013 թուականի Յունուարի 24-ին**, Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդը, Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը միաձայն հռչակեցին նախագիծ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ձեւաւորման մասին, ժողովրդավարական ընտրութիւններու միջոցով:
- - **2013 թ. Դեկտեմբերի 16-ին**, 64 պատգամաւորներ պաշտօնապէս ընտրուեցան Արեւմտեան Հայաստանի հայերու կողմէ, ովքեր նշուած էին ցուցակով:

- - **2014 թ. Յունուարի 20-ին**, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան առաջին Նախագահը պաշտօնապէս ընտրուեցաւ պատգամատրներու կողմէ:
- - **2014 թուականի Փետրուարի 23-ին**, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի հրամանագիրով նշուեցաւ, որ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւնը 1920 թուականին ճանչցուած Հայաստան Պետութեան շարունակութիւնն է:
- - **2014 թուականի Փետրուարի 16-ին**, Նախագահի հրամանագիրը կը հաստատէ պաշտօնապէս, որ Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդի եւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան նստատեղը Կարինն է (Էրզրում) Արեւմտեան Հայաստանի մէջ:
- - **2016 թուականի Յունիսի 24-ին** Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան անունով՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահը վաւերացուց Սեւրի պայմանագիրը:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան տեղեկատուական ծառայութիւն

24.06.2016 թ.

stat.gov.wa@haybachdban.org